

8. Քաղաքային բնակավայրերի սանիտարական մաքրում

Ըստ քաղաքային բնակավայրերի սանիտարական մաքրման աշխատանքներով զբաղվող կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, 2001թ. հանրապետության 43 քաղաքների սանմաքրման աշխատանքներում ներգրավված է եղել 562 հատուկ նշանակության մեքենա (2000թ.՝ 622), որից 203-ը կան 36.1%-ը՝ աղբատար (2000թ.՝ 222 կան 35.7%): Երևան քաղաքում այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 203, 75 և 36.9% (2000թ.՝ 226, 70 և 31.0%):


Վիճակագրական հաշվառման շրջանակում ընդգրկված չեն Մեծամոր, Տաշիր, Եղվարդ, Դաստակերտ, Վայք քաղաքները՝ հաշվետու տարում համապատասխան ծառայությունների գործունեության բացակայության պատճառով:

Հատուկ նշանակության մեքենաների քանակական բաշխվածությունը ըստ մարզերի, 2001թ.

	Ընդամենը	որից՝ աղբատար	2001թ. աճը կամ նվազումը %-ով 2000թ. համեմատ, նվազումը «-» նշանով	
			ընդամենը	որից՝ աղբատար
ք.Երևան	203	75	- 10.2	7.1
Արագածոտն	15	9	36.4	80.0
Արարատ	42	11	10.5	- 15.4
Արմավիր	10	7	- 68.7	- 63.2
Գեղարքունիք	26	9	- 21.2	- 30.8
Լոռի	99	30	0	0
Կոտայք	71	28	2.9	- 9.7
Շիրակ	26	11	- 21.2	- 15.4
Սյունիք	33	13	- 17.5	- 18.7
Վայոց ձոր	28	6	0	0
Տավուշ	9	4	- 30.8	- 33.3
Ընդամենը ՀՀ	562	203	- 9.6	- 8.6

Հարկ է նշել, որ փաստացի աշխատած մեքենաների քանակն զգալի զիջում է առկա մեքենաների քանակին այն պատճառով, որ դրանց մի մասը գտնվել է վերանորոգման, մյուսները՝ կոնսերվացման մեջ, հարկադիր պարապուրդում՝ կապված մթնոլորտային պայմանների և այլ պատճառների հետ:

Սանմաքրման համակարգի մեքենա-օրերի բաշխվածությունը ըստ փաստացի վիճակի, 2000-2001թթ. (%-ով ընդհանուրից)



Հատուկ նշանակության մեքենաների աշխատաժամանակի օգտագործման օգտակար գործողության գործակիցը 2001թ. հանրապետության քաղաքներում կազմել է 54.0% (2000թ.՝ 60.7%): Ըստ մարզային կտրվածքի, այն ունեցել է հետևյալ պատկերը՝ առավելագույնը Տավուշի մարզում՝ 91.7%, Երևան քաղաքում՝ 76.3%, Արմավիրի մարզում՝ 71.7%: Նվազագույն ցուցանիշը գրանցվել է Վայոց ձորի մարզում՝ 13.7%:

2001թ. ընթացքում սանմաքրման աշխատանքներում ընդգրկվել է հանրապետության քաղաքային բնակավայրերի մեքենայացված եղանակով մաքրված 3542.0 հազ. քառ. մ տարածք: Մեքենայացված եղանակով մաքրման աշխատանքների ընթացքում ծախսվել է 247.7 հազ. մեքենա-ժամ:

2001թ. համակարգի հատուկ նշանակության մեքենաներով թափոնակուտակիչներ (աղբույսներ) է տեղափոխվել 2202.0 հազ. խոր. մ կոշտ կենցաղային աղբ, 1327 տոննա ձյուն և այլ թափոններ: Համակարգում ընդգրկված 1000 քաղաքաբնակի հաշվով այդ ցուցանիշները կազմել են, համապատասխանաբար՝ 888 խոր. մ և 535 կգ: 2000թ. համեմատ աղբույսներ տեղափոխած կենցաղային կոշտ աղբի ընդհանուր քանակն ավելացել է 75.7 հազ. խոր. մ-ով, իսկ Երևան քաղաքում՝ 194.0 հազ. խոր. մ-ով:

Կենցաղային աղբույսներ տեղափոխած կենցաղային կոշտ աղբի քանակը, 2001թ.

	Ընդամենը, հազ. խոր. մ	%-ով ընդհանուրից	2001թ. աճը կամ նվազումը %-ով 2000թ. համեմատ, նվազումը «-» նշանով
ք.Երևան	1492.0	67.8	14.9
Արագածոտն	20.9	0.9	- 26.4
Արարատ	117.4	5.3	- 29.7
Արմավիր	4.1	0.2	- 87.6
Գեղարքունիք	35.1	1.6	53.3
Լոռի	37.1	1.7	- 16.3
Կոտայք	81.4	3.7	- 4.5
Շիրակ	11.0	0.5	- 66.6
Սյունիք	376.0	17.1	- 5.3
Վայոց ձոր	11.5	0.5	10.6
Տավուշ	15.5	0.7	115.3
Ընդամենը ՀՀ	2202.0	100.0	3.6

2001թ. սանիտարական մաքրման աշխատանքներով զբաղվող կազմակերպությունների տարեկան դրամական մուտքերը պետական և համայնքային բյուջեներից կազմել են 1028.8 մլն. դրամ (2000թ.՝ 896.4 մլն. դրամ): Շահագործումից ստացված փաստացի եկամուտները կազմել են 1109.5 մլն. դրամ, որից բնակչությունից՝ 409.7 մլն. դրամ կամ 36.9%:

Ծախսերի ընդհանուր գումարը կազմել է 1760.7 մլն. դրամ (2000թ.՝ 1501.4 մլն. դրամ): Ըստ առանձին հոդվածների, ծախսերի պատկերը հետևյալն է. 48.4%՝ նյութական ծախսեր, 4.5%՝ ոչ նյութական ծառայությունների վճարումներ, 23.6%՝ աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ, 7.2%՝ պարտադիր սոցիալական ապահովագրական վճարներ, 12.3%՝ հիմնավերանորոգման, սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսեր, մնացածը՝ այլ բնույթի ծախսեր:

Հանրապետության քաղաքային բնակավայրերի սանիտարական մաքրման դիմաց տարիների ընթացքում գոյացել է 1222.8 մլն. դրամ պարտք, որից բնակչությունից՝ 824.5 մլն դրամ կամ 67.4%, իսկ 2001թ.՝ 366.1 մլն. դրամ, որից բնակչությունից՝ 214.1 մլն. դրամ կամ 58.5%: Տարիների ընթացքում գոյացած պարտքերի 51.8%-ը բաժին է ընկել Երևան քաղաքին, 2001թ.՝ 53.6%: